ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 07.02.2024թ. կնքված N ԲԿԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12 ծածկագրով պայմանագրում 13.03.2024թ.-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ գնման առարկայի ձեռքբերման համար Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2024 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

Պայմանագրով հաստատված Հավելված N 1 Տեխնիկական բնութագրում և Հավելված N 2 վճարման ժամանակացույցում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) շարադրել նոր խմբագրությամբ։

Փոփոխության նկարագրություն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ԱՁ «Սահակյան Աշոտ Հրաչյայի»-ի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 13.03.2024թ.-ին կատարված փոփոխությունների արդյունքում Պայմանագրի կողմ հանդիսացող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հաշվեհամարը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. Հ/Հ 900011045565:

Պայմանագրով հաստատված Հավելված N 1 Տեխնիկական բնութագրում և Հավելված N 2 վճարման ժամանակացույցում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) շարադրել հետևյալ կերպ՝ 38631700/2:

Փոփոխության հիմնավորում՝ 07.02.2024թ. կնքված N ԲԿԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/12 ծածկագրով պայմանագրում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի անվանումը, հաշվեհամարը, Հավելված N 1 Տեխնիկական բնութագրում և Հավելված N 2 վճարման ժամանակացույցում գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**